№ 88 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5 (17) 1877 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5 (17) № 88

ՎԵՑԵՐՈՒՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 7 ռուբլ, կէս տարվանը 4 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և Արասխանեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց մամուլը։—Ներքին տեսութիւն։ Պ. Խատիսովի ղեկուցումը։ Նամակ Ցխինվալից։ Նամակ Խարկովից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Արևելեան խնդիրը։ Թիւրքիա։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։

Նոյեմբերի 30-ին, չորեքշաբթի օրը, ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՆ յետ դառնալով պատերազմական բեմից մտաւ ԹԻՖԼԻՍ։ Ամբողջ քաղաքը զարդարված էր դրօշակներով, ծաղիկներով և գոյնաւոր լապտերներով։ Երբ Նորին Բարձրութիւնը մտաւ քաղաքը նորան ընդունեցին քաղաքիս ներկայացուցիչները, բարձր պաշտօնեաները և համքարը։ Փողոցները լի էին ամբոխով։ Ամբողջ ճանապարհը մինչև պալատը լուսաւորված էր լապտերներով։

ՀԱՅՈՑ ՄԱՄՈՒԼԸ

Ինչպէս ամեն մի անհատ նոյնպէս ամեն մի ազգ աշխատում է իր թէ նիւթական—տնտեսական և թէ մտաւոր—հոգեկան պահանջները բաւականացնելու։ Մարդկային ցեղի բնաւորութեան այդ երկու կողմերը ստեղծում են իրանց տեսակում նոր պահանջներ և աշխատում են դրանց իրագործման վրա։ Այս երկու կողմերը ներքին կապով միացած՝ ազդում են փոխադարձ միմեանց վրա, դէպի լաւը կամ դէպի վատը։

Մի որ և իցէ ազգի լուսաւորութեան, կուլտուրայի պատմութեան գրելը նշանակում է նրա թէ նիւթական—տնտեսական և թէ մտաւոր—հոգեկան կեանքի զարգացումը և փոխադարձ միմեանց վրա ունեցած ներգործութիւնների հետևանքները նկարագրել։

Ստեղծագործութեան մէջ մարդարարածը աւելի բարձր, աւելի կատարեալ էակ լինելով, ձգտում է բնականապէս աւելի բարձր, աւելի ազնիւ իդէալներին, մտաւոր-հոգեկան կեանքին—այդ է նրա կոչումը։

Բոլոր գիտութիւնները գիտակցաբար, թէ անգիտակցաբար ունեն նպատակ, որչափ կարելի է մարդկային ցեղի նիւթական—տնտեսական պահանջների իրագործելը հեշտացնել, թեթևացնել, որ նրա միւս կողմը—մտաւոր—հոգեկան կողմը, ազատ լինի նիւթական աշխարհի ճնշումից և կարողանայ ազատ դիմել իր բարձր կոչմանը։

Հայերը հին ժամանակներում պատկանում էին մի նշանաւոր ազգայնութեան։ Հայը ունէր հնութեան մէջ իր սեփական լուսաւորութիւնը, կուլտուրան,—բայց որչափ որ մեզ յայտնի է, դժբաղդաբար, մինչև այսօր չունենք հայոց կուլտուրայի պատմութիւնը։ Հայերի լուսաւորութեան, յառաջադիմութեան գործը հնուց մինչև վերջերս հոգևորականների ձեռքում լինելով, սրանք ի հարկէ ամեն բանի վրա նայում էին կրօնական—եկեղեցական կէտից, ազգային կեանքի ամեն երևոյթներին հագցնում էին կրօնական զգեստը։ Բնականապէս սրանցից մենք չենք կարող սպասել «ազգային լուսաւորութեան պատմութիւնը» այդ բառի բուն նշանակութեամբ։

Որչափ որ հայերը ճնշված էին մահմետական ազգերի լուծի տակ, որչափ էլ նրանք հեռացրած էին մտաւոր կեանքի շարժումից, և հազիւ թէ ժամանակ ունէին իրանց տնտեսական դրութիւնը ապահովացնելու վրա ուղղը մաշելու, այնու ամենայնիւ մերկ չէին մտաւոր կեանքի պահանջներից, ընկած տեղը աշխատում էին մի որ և իցէ կերպով այդ պահանջներին բաւականութիւն տալ։

Այդ ցանկութիւնը, փափագը արտայայտում էր նորանով, որ հայը ամեն տեսակ նուիրատուութիւններ անում էր եկեղեցուն, հոգևորականութեանը, և միայն դրան։ Եւ այդ ոչ թէ միայն կրօնական զգացմունքից դրդված, այլ, ինչպէս վերև ասացինք, եկեղեցու, հոգևորականութեան մէջն ամփոփված լինելով հայոց լուսաւորութիւնը, կուլտուրան՝ հայը նայում էր եկեղեցու, հոգևորականութեան վրա ի՞նչպէս իր մտաւոր—հոգեկան կեանքի ներկայացուցչի, առաջնորդի վրա։

Անցան ժամանակներ, հայը մտածեց, իր մտքում կանգ արաւ, տեսաւ որ եկեղեցուց կարելի է բաժանել ժողովրդի դաստիարակութիւնը, գիտութիւնը, ուսումը, լաւ հասկացաւ որ այդ անհրաժեշտ հարկաւոր է. հայը օգնում է արդէն ոչ թէ միայն եկեղեցուն, հոգևորականութեանը, այլ և հայ ուսումնարաններին, նոր սերունդի դաստիարակութեանը առանձին։

Հայը մտել է, եթէ այսպէս կարելի է ասել, իր մտաւոր կեանքի երկրորդ շրջանը։

Բայց հայը այդ երկրորդ շրջանում չէ կանգնել, հայը ունի հիմայ նոր պահանջներ. հասարակական կեանքը առաջադիմութիւններ է անում։ Հայը պահանջ ունի գրականութեան, թատրօնի, մամուլի.... մէջ, բայց դրանց օգնել, դրանց համար նուիրատուութիւններ անել, հայի համար այդ դեռ նոր, անսովոր բան է։

Լուսաւոր աշխարհում մամուլը անհրաժեշտ հարկաւոր ոյժ, զօրութիւն է կազմում։ Մամուլը ունի միանգամայն բարձր և դժուար պարտաւորութիւններ՝ հետևել անդադար ժողովրդի կեանքին, ամենօրեայ երևոյթներին, նրա հոգեկան, քաղաքական, տնտեսական պահանջներին, գործունէութեանը, մտրակել նրա պակասութիւնները և ակնյայտնի անել նրա կատարելութիւնները, ականջ դնել ժողովրդի սրտին, պաշտպան հանդիսանալ նրա արդարացի պահանջներին, առաջնորդել նրան....

Այս ամենի կատարելը հեշտ չէ և դժուարագիւտ են լաւ պուբլիցիստները, մանաւանդ մեզանում ճրագով պէտք է որոնել։

Եթէ մի լրագրի խմբագրելը, ինչպէս հարկն է շատ մեծամեծ դժուարութիւնների է հանդիպում Եւրոպայում, այն էլ մի եւրոպական կիրթ լեզուով խմբագրված, ուրեմն որչափ և դժուարութիւնների, խոչնդոտների պիտի հանդիպէ հայ խմբագրութիւնը, հայ պուբլիցիստը, հայերէն լեզուով լրագիր խմբագրելիս։

Հայ պուբլիցիստը, հայ խմբագիրը, բացի այն ամեն դժուարութիւններից, որոնք յատուկ են ընդհանրապէս ամեն խմբագրութիւններին, պիտի և մարտնչի այն ամեն տեսակ խոչնդոտների, արգելքների դէմ, որոնք անբաժան միացած են ամեն թերակիրթ, դեռ չը լուսաւորված ազգերի հետ։

Հայ պուբլիցիստը ամեն քայլում պէտք է կանգնէ և իր համար ճանապարհ բաց անէ, եթէ ուզում է առաջ գնալ։

Հայ պուբլիցիստի համար դեռ չէ ստեղծված մկրատը, այսինքն հայ խմբագիրը կարող չէ ուրիշ լրագիրներից հարկաւոր յօդուածներ կտրել մկրատով և ուղարկել խմբագրին տպելու, այլ պէտք է առաջ ամենաչնչին բաներն էլ քննէ, թարգմանէ, ուրեմն ամենաչնչին բաների վրա էլ շատ ժամանակ կորցնէ։

Հայ հասարակութիւնը կարող չէ դեռ վարձատրել մտաւոր աշխատանքը, հայ խմբագիրները և սրանց աշխատակիցները չեն էլ սպասում մի մասնաւոր վարձատրութիւն հասարակութեան կողմից այն ամեն աշխատանքների համար, որոնք միանգամայն ուղեղը և մարմինը մաշում են, սրանք կը բաւականանան և նրանով, որ լրագրի գոյութիւնը ապահովված լինի։ Եթէ հայ հասարակութիւնը ցանկանում է որ հայոց մամուլը առաջ գնայ և նմանվի եւրոպականին, բաւական չէ, որ խօսքերով յայտնէ իր ցանկութիւնը, այլ պէտք է գործով ցոյց տայ իր համակրութիւնը։ Բաժանորդների շատութենից է կախված մի լրագրի առաջադիմութիւնը։

Ինչիս

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ Ց. ԽԱՏԻՍՕՎԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Օգոստոսի 27-ից մինչև հոկտեմբերի 4-ը, ես մեն էի գալի Երևանեան նահանգի բոլոր հայոց գիւղերը, անձամբ տեսնելու գաղթականներին։ Այդպիսով Երևանեան գաւառում ես մեն եկայ 3 գիւղ, Սուրմալուի գաւառում 7 գիւղ, Էջմիածնի գաւառում 29 գիւղ և Նոր-Բայազէթի գաւառում 28 գիւղ, ուրեմն բոլորը տեսայ 67 գիւղ, ուր ամեն տեղ տեսնում էի ժամանակաւորապէս հիւրընկալութիւն գտած գաղթականներին։ Մօտ 22 գիւղ անձամբ չը կարողացայ գնալ, առաջուց իմանալով որ վերոյիշեալ գիւղերում գտնված գաղթականները կամ օգնութեան կարօտութիւն չունէին, կամ թէ թւով շատ քիչ էին, մի ուրիշ պատճառն էլ այն էր որ վերոյիշեալ գիւղերը գնալու համար շատ ժամանակ էր պահանջվում իրանց հեռաւորութեան և վատ ճանապարհների պատճառով։

Ալէքսանդրապոլի նահանգը ևս բոլորովին չը գնացի, մասամբ որ ժամանակ չունէի և մասամբ նրա համար որ այնտեղի գաղթականների մեծ մասը Ալաշկերտի նահանգիցն էին, որոնք մի փոքր կարողութիւն ունեն։ Այնու ամենայնիւ խնդրեցի ևս Երևանեան մանաժողովը որ ասյ ինձ առաջնորդ իրան անդամակիցներից մէկին վերոյիշեալ գաւառը գնալու և նրանց մանրամասն քննելու համար։ Մանաժողովը այս յանձնարարութիւնը դրեց պ. Ա. Զ. Կորգանովի վրա, որը շուտով պէտք է դուրս գար Երևանից։

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՒԸ։ Այժմ այս գաղթականները բաժանված են գաւառների վրա հետևեալ քանակութեամբ՝ Սուրմալուի գաւառում 23, Էջմիածնի գաւառում 270, Նոր-Բայազէթի գաւառի Դարաչիչագի մասում 152, Նոր-Բայազէթի Գեոկչայի մասում 200, Երևանեան գաւառում 87. զանազան տեղեկութիւններ հաւաքեցի և իմացայ որ Ալէքսանդրապոլի գաւառում և Էջմիածնի գաւառի Թալինի մահալում հայերը 80 են, Վիզնիկովից եկած յոյները Ալէքսանդրապոլի գաւառում 39 են, բոլորը 851։

Միջին թիւով բոլոր քրիստոնեայ գաղթականները, որոնք մեծ մասամբ հայեր են, 900 ընտանիքից աւելի չեն կարող լինել։ Այս ևս անձամբ տեղեկացայ և հաւաքեցի սրա մասին բաւական տեղեկութիւններ։ Ալաշկերտ և Բայազէթ նահանգների 27 հայոց գիւղերում Զէյդեկանից մինչև Բայազէթ քաղաքը հաշւում են բոլորը 822 ծուխ, որը հաղորդեց Բայազէթի թեմական առաջնորդ հայր Յովհաննէսը, որը այժմ գտնվում է Էջմիածնում։ *)

Բոլոր գաղթականները համարեայ անցնում էին Էջմիածնով, և Էջմիածնի գաւառական կառավարութենից տալիս էին նրանց անցման տոմսակներ. բոլոր բաժանված տոմսակները 812 հատ են։

Մի խօսքով ներկայումս բոլոր քրիստոնեայ գաղթականները 900 ընտանիքից աւելի չեն, այս թուի մէջ հաշուելով և Բայազէթ քաղաքի 80 հայ ընտանիքներ, որոնց թիւը հանում էր 216-ի, որոնցից մնացածները այժմ ապրում են Պարսկաստանի Մակուի խանութեան մէջ։ Բացի քրիստոնեաներից, որոնք Երևանի զօրքին էին հետևում, կային մօտ 100 ընտանիք թուրք եղեղներ Ալաշկերտի մահալի 7 գիւղերից, որոնց հետ միացան և մեր եղեղները մօտ 400 ընտանիք, որոնք եկել էին Սինասիի լեռան շրջակայքից։ Այդպէս ուրեմն բոլոր գաղթականների թիւը որոնք հետևում էին զօրքին հասնում էր 2000 ընտանիքի, ինչպէս որ անձամբ ինքն գներալ լէյտենանտ Տէր-Ղուկասով պատմեց ինձ։

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ։ Առհասարակ պէտք է նկատել, որ Ալաշկերտ նահանգի գաղթականները որոնք Երևանի զօրքին էին հետևում, աւելի լաւ դրութեան մէջն են գտնվում քան թէ Բայազէթ նահանգի գաղթականները, որովհետև առաջինները կարողացան ազատել իրանց հարստութեան և կենդանիների մի մասը, այն ինչ վերջիններին բոլորովին կողոպտեցին քուրդերը, նրանք ոչ դրաստ ունեն, ոչ շոր և ոչ փող և ամենախեղճ դրութեան մէջ են գտնվում, այնպէս որ նրանց մեծ մասը փոխադրելու միջոց չունենալով, մնացին Սուրմալուի գաւառում, Սարդարապատի մասում, Էջմիածնի շրջակայ գիւղերում և մասամբ Դարաչիչագի մահալում, որտեղ տանջվում են նրանք ջերմից և լուծելուց, շատերը դրանցից մեռան, շատ ընտանիքներ ևս բոլորովին ջնջվեցան։ Իմ այս տեղերը ճանապարհորդութեան ժամանակ բժիշկ Տէր-Մինասեանցի հետ միասին, որին Երևանի նահանգապետը ուղարկել էր մանաւորապէս գաղթականներին քննելու, բոլոր հիւանդներին օրքան կարելի էր բժշկական օգնութիւն տուեցինք, մանաժողովից ուղարկած դեղերը բաժանեցինք, դրամական օժանդակութիւն ևս տուինք իւրաքանչիւր ընտանիքին 3-ից մինչև 25 բուբլի, այդպէսով 366 ծուխին բժշկական և դրամական օժանդակութիւն տրվեցաւ և 3,176 բուբլի էլ որ ուղարկել էր մանաժողովը բաժանեցինք նրանց մէջ։

Վերոյիշեալ փողը բաժանելու ժամանակ հարցնում էի ամէն տեղ իւրաքանչիւր ընտանիքին թէ որ գիւղից են, քանի հոգի են առական սեռից և օրքան հոգի իգական սեռից, թէ քանի հասակաւորներ կան և քանիսն են անչափահասները, քանի հիւանդ կայ և քանիսն են առողջ, թէ օրքան ընտանի կենդանիներ են բերել։ Հեշտ ծանօթանալով իւրաքանչիւր ընտանիքի դրութեան հետ այնպէս էլ տալիս էի դրամական օժանդակութիւն, առաւել շատ տալիս էի նրանց, որոնք բոլորովին ընտանի կենդանիներ չունէին, օրինակ Բայազէթ մահալի Կօրուն, Մուսուն, Արցաբ, Բօսի, Սարիբէգ, Մայրիման գիւղերի և Բայազէթ քաղաքի բնակիչներին։ Միջին թիւով ամէն մէկին ընկնում էր 1-ից մինչև 2 բուբլի։ Բայց որովհետև պատահում էին այնպիսի ընտանիքներ որոնք 15 կամ 20 հոգուց էին բաղկացած այն ժամանակ իւրաքանչիւր ընտանիքին տալիս էի երբեմն 20-ից մինչև 25 բուբլի։ Այն գաղթականները, որոնք շատ անասուն ունեն, օրինակ Ղարաքլիս, Խղիր, Ենջալու գիւղերի բնակիչներ և ուրիշները, որոնք ունէին մինչև 100 ոչխար, 20 գոմէշ, ևս ոչինչ չէի տալիս, բայց եթէ սրանց մէջ հիւանդներ էին պատահում, այն ժամանակ գեղ էի տալիս նրանց և երբեմն էլ 3-ից մինչև 5 բուբլի շորերի համար, եթէ որ սրանց մէջ պատահում էին ծերը և հիւանդ երեխաներ, աւելացնելով մի և նոյն ժամանակ որ այս փողերը տրվում են նրանց կամ շոր գնելու և կամ ննդարար կերակուր պատրաստելու հիւանդների համար։

Մինչև այժմ գաղթականների մեծ մասը, խմբերով բնակվելով 1—15 ծուխ իւրաքանչիւր հայոց գիւղում, կերակուրը ողորմութեան նման գիւղական բնակիչներից են ստանում, բայց 53 ընտանիք կերակրվում են այն հացով, որը իւրաքանչիւր օր ուղարկում է Էջմիածնի վանքը։

Միայն մի քանի ունևոր ընտանիքներ կարողանում են իրանց համար գնել հաց և մինչև անգամ դարման իրանց անասունների համար։ Բոլոր գիւղերում բնակվելու տեղերը անվարձ են տրված, բացառութեամբ մի քանիների այն ևս շատ սակաւ դէպքերում, Գոկչայի մասում և Աբարանում, որտեղ մի քանիսները իրանց ենչին միջոցներից բնակութեան համար վճարում են ամիսը 2—3 բուբլի։ Այդպիսի դէպքերում ես յորդորում էի գիւղերի մեծերին, որ ազատեն այդ թշուառներին բնակութեան համար փող վճարելուց, ինչպէս տան անդամների համար, նոյնպէս և անասունների բնակութեան համար գոնէ մինչև գարունը։ Հաւաքելով տեղեկութիւններ թէ Ալաշկերտցիք օրքան դրաստ են բերել ես ցաւելով լսեցի շատ գաղթականներից գանգատ այն բանի վրա, որ Սուրմալուի գաւառում զօրքի հետ միասին գալուց յետոյ կորցրին խիստ շատ անասուն, այն ինչ Տաճկաստանից մինչև Իգդիր, գտնվելով միշտ զօրքի հովանաւորութեան տակ, ոչ մի կենդանի չը կորցրին նրանք, բացի այն մանր կենդանիներից, որոնք ընկնում էին նուազութենից։

Շատ անգամ պատահելով նահանգի գաղթականներին ես միշտ հարցնում էի նրանց պատուաւոր և նշանակութիւն ունեցող մարդկանց, թէ ի՞նչ են մտածում անել նրանք ապագայում, ցանկանո՞ւմ են նրանք մնալ բոլորովին Ռուսաստանում, թէ պատերազմի վերջանալուց յետոյ, կրկին կը վերադառնան իրանց գիւղերը։ Ամէն մարդուց մի և նոյն պատասխանն էի լսում։ Թող տայ Աստուած ռուսաց զէնքին աջողութիւն, եթէ մեր դաւառները Ռուսաստանին կը մնան, այն ժամանակ կառավարութիւնն անկասկած չի արգելի մեզ դրաւելու մեր հարուստ և պտղաւոր հողերը, որտեղ մենք թողեցինք բոլոր մեր հարստութիւնը, իսկ եթէ կրկին տաճիկների կառավարութիւնը կը մնայ այն ժամանակ խնդրում ենք Ռուսաստանին, որ տայ մեզ ապաստարան ինչպէս 1828 թուին տուեց մեր համադիւղացի եղբայրակիցների մի քանի հազար ընտանիքին, որոնք այժմ Երևանեան նահանգի քրիստոնեայ ազգաբնակութեան մեծ մասն են կազմում, որովհետև այս նահանգից հեռու ուրիշ դաւառներ մենք չէինք կամենայ գնալ։ Մեր եղբայրակիցները ցաւակցելով մեզ, մենք այժմ ոչ բնակութեան և ոչ ապրուստի կարօտութիւն ունենք։

Միայն Ղարաքլիսի բնակիչներից մի քանիները յայտնում էին, որ ինչ որ պատահի այնու ամենայնիւ անպատճառ կը գնան իրանց հայրենիքը, որովհետև նրանք թողել են այնտեղ շատ հարստութիւն, որից նրանք չեն կարող հրաժարվել։ Շատերը նրանցից ասում էին որ փողերը հողումն են թաղել, տան տարբ ու կարգը և ընտանի կենդանիները յանձնել են ծանօթ քուրդերին, նրանք այնտեղ թողեցին այդիներ, ջաղացներ, իսկ հողերը ենբանց կատարեալ սեփականութիւններ են, օրինաւոր և հաստատ վկայականներով։ Ոչ թէ միայն գաղթականներ են ասում այս, այլ և Երևանի զօրքին մանակցողներից շատերը, որոնք հաստատում են որ բոլոր շերթը սկսած Զէյդեկանից մինչև Բայազէթ չափից դուրս պտղաբեր է և որ նրա բնակիչները յայտնի էին իրանց հարստութեամբ։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ՅԹԻՆՎԱԼԻՑ

25 Նոյեմբերի

Որքան հեռանում է մարդս ուսումնարանից նիւթ վերցնել և գրել՝ այնու ամենայնիւ աչքի առաջ ընկնում են այն ամենամեծ կէտերը պակասութեան, որ թոյլ չէ տալի լռել։—Ուսումնարանը լինելով մի հասարակութեան դաստիարակութեան առաջին տեղ, որտեղից պէտք է դուրս գան կրթված անձինք, որով և պէտք է վերջանայ դարերով խաւարի մէջ խմորված հին սեռունդը,—առանց ուշադրութեան թողնել,—անկարելի է։ Շատ գեղեցիկ կը լինէր, եթէ մեր հայ հասարակութիւնը առանց ականջների մէջ փողը ածելու, հասկանար ուսման հարկաւորութիւնը. այն ժամանակ թղթակիցները ստիպված չէին լինի հանապազ ուսումնարանների վերաբերութեամբ մրմրալու և կը վերցնէին հասարակութեան կամ զանազան պարագաներից իրանց համար նիւթեր գրելու։

Ճշմարիտ է ուսումնարանները հայ կեանքի համար պակաս նիւթեր չեն, մանաւանդ հայի պէս մի ազգի համար, բայց գուռալով խելագարի պէս՝ «կակալ, կակալ» միայն կակալը փորը կը կշտացնի, այլ մարդուս կեանքի համար հարկաւոր է զանազան պարագաները՝ որով կարողանայ երջանիկ և մարդավայել ապրել։—Իմ աշխատութիւնս միշտ այն է եղել, որքան կարելի է հեռանալ ուսումնարանի վերաբերութեամբ գրելուց, սակայն կրիտիկական բօպէն Յթինվալի ուսումնարանի՝ ինձ չէ թոյլ տալի չը գրել մի քանի տողեր ի գիտութիւն ազգակիցներիս,—համաձայն իմ պարտականութեան։

Երևակայեցէք, կարդացող, հայ-հասարակութեան մի փոքրիկ խումբ անջատված, գտնվում են շրջապատված վրաց ազդաբանութեամբ. նոքա մոռացել են մայրենի լեզուն, հայութեան բոլոր յատկութիւնները, միայն կրում են իրանց վրա լոկ հայ անունը, այն էլ՝—հայերի աւանդութեամբ, մանում են եկեղեցի, ժամերգութենից նոքա բնաւ ոչինչ չեն հասկանում, միայն գիտեն, որ կրօնով հայ լուսաւորչական են։ Ուրեմն այսպիսի տեղ օրքան հարկաւոր է ուսումնարանը։

Եօթը տարի մեր ուսումնարանը գոյութիւն ունէր, թէև այնքան միջոցին նա չէ գտնվել ծախկեալ և նախանձելի վիճակի մէջ, բայց իր գոյութեամբ մեզ ցոյց է տուել իր արդիւնքները.—այն է՝ դուրս են եկել այնպիսի աշակերտները այնտեղից, որոնք մի քանի տարի անցնելով ուսումնարանի մէջ, սովորել են մի քանի բան և խօսում են փոքր ի շատէ հայերէն։—կարծեմ պակաս մխիթարութիւն չէր Յթինվալի հայ-հասարակութեան համար։

Ահա այս երկու տարի է ուսումնարանը գրանվում է փակված։ Յթինվալի հայ մանուկները թափառում են փողոցէ փողոց և այգէ այգի և իրանց դաստիարակութիւնը և կրթութիւնը գրանում են փողոցի դատարկաշրջիկ երեխաներից. նոցա բերանները լի էին լինում հայհոյանքներով։ Մեր յիշողութեան մէջ երկար տարիներ մնալու է Տէր-Սաւփանոս հօր տեսչութիւնը, որ իր պաշտօնի ժամանակ համոզելով ժողովուրդը պահեց ուսումնարանը։ Սակայն այս երկու տարի է ուսումնարանի փողերի հաշիւը յայտնի չէ և ոչ էլ ուսումնարանը գոյութիւն ունի։ Ինձ շատերը ասացին, իբր թէ այդ ուսումնարանի փողերը բաժանում է հոգաբարձութիւնը ասելով թէ՝ «Ուսումնարանի վրա փողերը մխսել ենք և պէտք է վերցնենք»։—

Զը նայելով որ մեր ուսումնարանը ունի չորս հիւ Տէր-Սաէփանոս Տէր-Սաէփանեանցի զեղեցիկ սեղաններ, գրատախտակ, նոր սենեակ որին միայն հարկաւոր է սրել և ապակիները նստացնել, թողնված է առանց ուշադրութեան, իսկ մեր սեղաններից և գրատախտակներից օգուտ է քաղում մի օս ուսուցչուհի։ Այն օրից, երբ նոր թեմական վերատեսուչ, պ. Յակովբ Տէր-Յովհաննիսեանց ուսուցիչ նշանակեց ինձ տեղւոյս ուսումնարանի մէջ, մինչև այս օրս էլ խաբում են հոգաբարձուները ուսմարանի բացման վերաբերութեամբ այսօր և վաղ յետաձգելով (կարծես մի երեխայի հետ խաղում լինեն)։ Մանաւանդ եթէ ուսուցիչը օտար տեղից լինէր ինչ պէտք է անէր։ Պէտք է քաղցած մեռնէր։ Թէև այս իրողութիւնը գրել եմ թեմական վերատեսչին նամակով։

Թեմական վերատեսչի պարտականութիւնն է ուշադրութիւն դարձնել այդպիսի ուսումնարանի վրա, որքան հնար լինի աշխատել վերականգնել, իսկ եթէ անհնար է գոնէ բոլորովին փակել։ Միայն անունը կայ որ Յթինվալի մէջ ուսումնարանը գոյութիւն ունի, սակայն չնորհիւ մի քանի անձինքների և հոգևոր հօր նախանձի՝ փակված է ուսումնարանը։ Ինչպէս հոգաբարձուներից մէկը ժողովրդականներից մէկին ասել էր հարցնելու ժամանակ՝ թէ «ուսումնարանը բաց անել կախված է այստեղի աւագ քահանայից»։

Մինչև երբ չը պէտք է ազատվին հայ խղճալի ուսումնարանները այդ տեսակ խաչնդտներից, յիմար և նախանձելի կիրքերից։ Իրանք խեղճ հայ ժողովրդականների համար գործ չեն չինում և ուրիշներին էլ արգելում են գործ կատարել։ Քանի որ իրանք սատանում էին ուսումնարանից օգուտներ քարոզում էին ժողովրդին նուիրատուութիւնները աւելացնել, իսկ երբ իրանց հարեանին է տրվում պաշտօնը—եղածն էլ քանդում են։ Ահա հին սերունդի փտած քաղաքականութիւնը՝ ազմկել ժողովուրդը, հալածել խեղճ երիտասարդներին, որքան կարելի է նեղութեան և յուսահատութեան մէջ ձգել և քաղցած սպանել։ Ներեցէք, երիտասարդութիւնը յուսահատվող պտուղ չէ. թող որքան կարող էք հազար և մի որոգայթներ լարեցէք և հազար և մի եղուիտական փոսերը փորեցէք, նորա մէջ ոչ ոք չը կայ ընկնող։ Եւ յուսով ենք, որ ճշմարտութիւնը տասն և իններորդ դարի մէջ յաղթող կը հանդիսանայ։

Այս գործի վերաբերութեամբ հրաւիրում ենք Նորին Սրբազնութեան և թեմական վերատեսչի ուշադրութիւնը։

Բ. Տէր-Աբրահամեանց

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՕՎԻՑ

Նոյեմբերի 20-ին

Անցեալ հոկտեմբերի 3-ին հաղորդեցի սեպտեմբեր ամսին այստեղ բերած հիւանդ և վի-

---

*) Ալաշկերտի մահալի գիւղերը. Զէյդեկեան, Մազրա, Զիլկանի, Եգնի-տապա, Աչխալա, Հաջի-Սաֆար, Ղարաքլիս, Մուրադ-խան, Զամուրլու, Իրիցագեղ, Ենջալու, Խղիր, Մանգասար, Կիւպկրան, Զիրօ և Սօֆիանս։ Բայազէթի մահալի գիւղերը. Բօսի, Ուչքիլիսէ, Կումլուպուլախ, Կարաքաղար, Ջիւլան, Սարիբէգ, Մուսուն, Մայրիման, Կօրուն, և Արցաբ։ Գաղթականների մէջ ես չէի պատահում այնպիսիներին, որոնք բացի վերոյիշեալ գիւղերից ուրիշ տեղերից ևս լինէին։

բաւորված զինուորների մասին։ Բացի նոցանից հոկտեմբեր ամսին ևս մեծ քանակութեամբ հասան Խարկով հիւանդներ և վիրաւորվածներ։ Նոյն իսկ հոկտեմբերի 3-ին Եասսի քաղաքից եկաւ նոր սանիտարական գնացք՝ որ բերեց դէպի մեզ 270 հոգի՝ որոնցից 182 հոգին վիրաւորվածներ էին և ըստ մեծի մասին Պլէվնայի մօտ։ Սրանցից 152 հոգի զետեղվեցան Կարմիր Խաչի ընկերութեան հիւանդանոցներում, 55 հոգի զինուորական հիւանդանոցներում, 56 Սաբուրովի ամարանոցում և 7 համալսարանի հիւանդանոցում։ Երկրորդ օրը հասաւ ուրիշ մի սանիտարական գնացք ևս՝ որ բերեց 290 հոգի վիրաւորվածներ, որոնցից երկուսը աստիճանաւորներ (офицеръ) էին։ Հոկտեմբերի 26-ին Եասսից դարձեալ եկաւ Խարկով մէկ գնացք ևս որ հասցրեց 254 հոգի։ Վիրաւորվածների մէջ կար և մէկ աստիճանաւոր։ Նոքա բոլորը ստացան լաւ ընդունելութիւն և ճաշ տեղւոյս վաճառական պ. Ալեքսէեվի կողմից։ Հիւանդների մէջ կային և այնպիսիներ՝ որոնց ոտքերը ցրտահարված էին։ Նոցա խօսքով նոքա ցրտահարվեցան Պլէվնայի մօտ հոկտեմբերի մէկին՝ երբ յանկարծ ցուրտը հասաւ մինչև 15° աստիճանը։ Այս վերջին վերոյիշեալ թւից ընդունեց պ. Ալեքսէեվը իր մօտ դարման անելու և հոգալու իր ծախսով 40 հոգի, իսկ մնացեալներն տեղաւորվեցան տեղւոյս զինուորական և Կարմիր Խաչի ընկերութեան հիւանդանոցներում։ Հոկտեմբերի 27-ին սանիտարական գնացքը ճանապարհ ընկաւ դարձեալ դէպի Կրեմենչուգ հիւանդներ և վիրաւորվածներ ընդունելու։ Վերջին ժամանակները այս կողմով անցնում են՝ հիւսիսէն դէպի հարաւ, բաւականին շատ դատարկ գնացքներ նոյն նպատակաւ։

Հաղորդելով այստեղի վիրաւորված և հիւանդ զինուորականների մասին՝ հարկաւոր եմ համարում նմանապէս հաղորդել՝ որ տեղւոյս բժշկական ընկերութիւնը հոկտեմբերի 30-ին երկրորդ անգամ դուրս թողեց հիւանդապահուհիներ (сестры милосердія) որոց համար դասերը սկսված էին սեպտեմբերի 1-ին։ Երկու ամսվայ միջոցում աղտոտ հիւանդապահուհիները պարապում էին մեծ եռանդով և առաջադիմութեամբ։ Զը նայելով՝ որ Կարմիր Խաչի տախտակաշէն հիւանդանոցները բաւականին հեռու են քաղաքից՝ բոլոր հիւանդապահութեան համար պատրաստվող իգական սեռը՝ համարեա ամեն օր և ամեն տեսակ եղանակին այնտեղ էր գտնվում։ Տեղւոյս մի քանի դասատու պրոֆէսօրների և բժիշկների վկայութեան հիման վրա 40 հոգիից՝ միայն 28 կարող են հմտութեամբ կատարել հիւանդապահութեան պարտաւորութիւնը։ Ուստի և Խարկովի բժշկական ընկերութիւնը տուեց առաջին կարգի վկայական իրանց հիւանդապահութեան ուսման ընթացքը աւարտելուն և առաջին կարգի հիւանդապահուհի (сестра милосердія 1-го разряда) աստիճան 28 հոգու միայն՝ ի թիւս որոց և մի հայ օրիորդի Վ. Արդարեանին։

Միջազգային հեռագրական ընկերութիւնն նոյեմբերի 6-ին հասցրուց Խարկովի բնակիչներին այն ուրախալի լուրը՝ որին վաղուց սպասում էին անհամբերութեամբ։ Այն է ռուսաց զօրքի Ղարս ամրոցի վեր առնելն՝ որ բոլոր քաղաքիս մէջ պատճառեց աննկարագրելի ուրախութիւն։ Նոյն իսկ բոպէին բնակիչները սկսեցին իրանց տները դրօշակներով, լապտերներով և խալիչաներով (գորգ) զարդարել։ Երկրորդ և երրորդ օրը արդէն համարեա բոլոր ճանապարհների վրա եղած տները գոյն գոյն դրօշակներով և լապտերներով՝ գեղեցիկ և ուրախալի տեսարան էին ներկայացնում։ Այս տեսակ ուրախութիւնը ճրագալոյցներով քաղաքիս մէջ տեւեց հինգ վեց օր։ Բացի սրանից վերոյիշեալ հեռագրի ստանալու երկրորդ օրը իսկ՝ նշանակած էր տեղւոյս մայր եկեղեցում մաղթանք ռուսաց զէնքին այսպիսի աջողութիւն պարգեւելու համար, որտեղ ներկայ էին գաւառապետը և թագաւորական ամեն տեսակ ծառայութեան ներկայացուցիչները։

Հոկտեմբերի 18-ին այստեղ էր երևելի նկարիչ պ. Իվան Կոստանդինովիչ Այվազովսկին Թէոդոսիայէն Պետերբուրգ գնալու պատճառաւ։ Ցաղանդաւոր նկարիչը տարաւ իր հետ Պետերբուրգ 11 հատ նկարներ՝ որ նկարած էր մայիս ամսից սկսած և ըստ մեծի մասին իր պատմական կալուածքում, Շախ-մամայում (Թէոդոսիայից 25 վերստ հեռաւորութեամբ) և Թէոդոսիայում։ Այս նկարները նշանակած են հանդէսի (выставка) համար յօգուտ վիրաւորված և հիւանդ զինուորականների։ Սիմֆերօպոլում այս պատկերների հանդէսը բերեց 800 բուբլի։ Մոսկվայում հանդէսը կը տեւի մէկ ամիս, Պետերբուրգում մինչև դեկտեմբերի վերջը։ Յունվարի սկզբին երևելի նկարիչը մտադիր է ճանապարհորդել Բելգիա, Փարիզ և Իտալիա, իսկ նկարները պիտի ուղարկվեն հանդէսի համար նոյն նպատակաւ այստեղ, յետոյ Պոլտաւա և վերջապէս Օդէսսա։

Ցանկալի կը լինէր որ նշանաւոր հայ նկարիչը նոյն պատկերները բարեհաճէր ուղարկել հանդէսի համար Թիֆլիս ևս՝ նշանակելով հանդէսից ժողոված գումարը յօգուտ Անդրկովկասեան հայ գաղթականների։

Այստեղ նոյն երևելի նկարչի նկարած պատկերների մասին մէկ վէճ կայ՝ որ դեռ ևս չէ վերջացած դատաստանական ատեանում։ Տեղւոյս լրագիրները գործի հանգամանքները լսելով՝ պատմում են այսպէս. Իբրև թէ տիկին Խլովայկին ունէր մէկ քանի նկարներ Այվազովսկու գրչի քաղած և որովհետև նոր տուն բռնելու ժամանակ տանուտէրը պայման դրեց՝ որ պատերի մէջ մեխ չը խփվի, տիկինն սիրված էր պահել նոյն պատկերներն մէկ այլ տեղ։ Պ. Լազարեվիչն բարեկամութիւն ունենալով տիկնոջ հետ՝ առաջարկեց այն պատկերներն պահել իր մօտ մինչև տիկնոջ պահանջելն և տարաւ իր մօտ։ Այժմ երբ հանգամանքներն տիկնոջ փոխվեցան՝ տիկինն պահանջեց պարոնից իր տուած պատկերներն, բայց պարոնն հրաժարվեց վերադարձնելու։ Ուստի տիկինն սկսեց դատաստանական կարգով վէճ և պահանջում է պ. Լազարեվիչից 3000 բուբլի, նկարների արժողութիւնը։ Այժմ ասել՝ թէ տիկինի վէճն որքան իրաւացի է կամ անիրաւ չէ կարելի՝ պատճառ որ դեռ ևս գործն չէ ստացել օրինաւոր ուղղութիւն և չէ քննված դատաստանական կողմից, թէև երկու կողմից ևս կան արդէն նշանակած փաստաբաններ։ Գործի քննութիւնն նշանակած էր նոյեմբերի 17-ին, բայց յետաձգվեցաւ։

Ա. Մելքումեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Սաստիկ թանգութեան պատճառով ԹԻՖԼԻՍԻ ֆայետոնները պակասել են թւով, այնպէս որ շատ դժուար է այժմ հարկաւոր ժամանակ մի ֆայետոն գտնել։ Մեր Քաղաքային Վարչութիւնը ի նկատի ունենալով կառապանների խնդիրը և տիրող թանգութիւնը վճռեց աւելացնել ֆայետոնների վրա եղած տակսա։ Այժմ ֆայետոնը մի ուղղութեամբ գնալու համար 30 կոպէկի տեղ արժէ 40 կոպէկ, իսկ ժամը արժէ 80 կոպէկ։

—

Ահա քանի մի օր է որ ԹԻՖԼԻՍԻ մէջ եղանակը շատ խոնաւ և անձրևային է։

—

Երեքշաբթի օր, դեկտեմբերի 6-ին լինելու է ԹԻՖԼԻՍԻ ժողովի մէջ (Հայոց կլուբ) պարահանդէս յօգուտ գաղթական հայերի։

—

ԹԻՖԼԻՍԻ Քաղաքային Վարչութիւնը յայտնում է որ դեկտեմբերի 9-ին ներկայ 1877 թւի, ժամ 1-ին կէսօրից յետոյ, Ուպրավայի ներկայութեամբ նշանակվում է հրապարակական աճուրդ, առանց կրկնաճրդութեան հետևեալ անշարժ կայքերի, նոցա տէրերի կողմից իր ժամանակին գնահատական հարկ չը մտցնելու պատճառով։ Ա. Մովսէս Միրիմանովի տունը, քաղաքիս 2-որդ բաժանման մէջ, 13-որդ վիճակում, որի վրա ապառիկ կայ 94 բուբլ և 1 կոպէկ։ Բ. Մամադ Ալիբէկ-Իբրահիմբէկովի տունը 2-որդ բաժանման, 11-որդ վիճակում։ Ապառիկ կայ 464 բ. 51 կոպէկ։ Աճուրդը կը սկսվի այն գումարից, որ հաւասար է իւրաքանչիւր ապառիկի գումարին։ Ցանկացողները կարող են ծանօթանալ կայքերի նկարագրի հետ ամեն օր Ուպրավայի մէջ, մինչև 2 ժամ կէսօրից յետոյ։

—

ԹԻՖԼԻՍԻ Քաղաքային Հոգաբարձութիւնը զինուորների ընտանիքների օգնութեան բացեց իր գործունէութիւնը հոկտեմբերի 23-ից ներկայ 1877 թւի։ Խնդիրքները օժանդակութեան համար ընդունվում են Քաղաքային Վարչութեան մէջ ամեն օր 12 ժամին։ Զայնի իրաւունք ընդհանուր ժողովներում ունեցող անդամներ կարող են լինել այն անձինք, որոնք նուիրեցին յօգուտ ընկերութեան ոչ պակաս քան 5 բուբլ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԱԻԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԸ

—

«Հավասի» հեռագրական ընկերութիւնը հաղորդում է Փարիզից նոյեմբերի 29-ից (դեկտեմբերի 11-ից) հետևեալ լուրը, որ տպված է գերմանական «Kölnische Zeitung» լրագրում, որ այդ լրագիրը ստացել է Վիէննայից։ Այդ լուրը, եթէ ստոյգ է, մէկ վճռողական լուծումն է տալիս արևելեան խնդրին, հետևեալ պայմանների հիման վրա խաղաղութիւն կապելով Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ։ Հեռագիրը հաղորդում է որ այդ պայմանները իբր թէ արդէն համաձայնութիւն ստացան Գերմանիայի և Աւստրիայի կողմից։ Ահա այդ պայմանները՝ Դարդանելեան անցքի միջով ազատ երթևեկութիւնը, Ռուսաստանին Հայաստանի միացնելը, Բոլգարիայի ինքնավարութիւնը մի իշխանի, բայց ոչ թէ Ռուսաց թագաւորական տան իշխանի կառավարութեամբ, Ռումինիայի և Սերբիայի անկախութիւնը, Զէրնոգորիայի մեծացնելը, Բոսնիայի և Հերցեգովինայի Աւստրիային միացնելը։ Հաւատացնում են, աւելացնում է հեռագիրը, որ այդ լուրերը ստոյգ են։ Այնուամենայնիւ եթէ այդ լուրերը ստոյգ են, երևի այդ տեսակ պայմաններ կարող են համաձայնութիւն ունենալ միմիայն Գերմանիայի և Աւստրիայի կողմից, այն ինչ Անգլիան դեռ ևս ոչինչ որոշ հայեացք չէ յայտնել արևելեան խնդրի ներկայ պատերազմի միջոցով վճռելու մասին։ Հասարակական կարծիքը Անգլիայում բաժանված է երկու զլխաւոր ուղղութեամբ, որոնց ներկայացուցիչը մի կողմից «Times» լրագիրն է, միւս կողմից «Morning Post» լրագիրը։ Առաջինը յայտնում է այն միտքը որ Անգլիան բոլորովին չը պիտի խառնվի ներկայ ռուս-թիւրքաց պատերազմի մէջ և չը պէտք է մտածէ փրկել Թիւրքիայի եւրոպական նահանգները։ Լրագիրը պահանջում է որ անգլիական տէրութիւնը անպատճառ հաղորդէ այդ մասին Բարձր. Դրանը։ «Morning-Post», ընդհակառակն, հաստատում է որ ռուսների աջողութիւնները Թիւրքիայում մեծ վնաս են տալիս անգլիական շահերին և խիստ կերպով խօսում է Ռուսաստանի դէմ։

ԹԻՒՐՔԻԱ

—

Միդհադ-փաշա մի նամակ է գրել Նէապոլից, նոյեմբերի 7-ից (19) մի ուրիշ փաշային, որ Կ. Պոլսի մէջն է։ Այդ նամակի մէջ նա խօսում է Թիւրքաց սահմանադրութեան և նրա նշանակութեան վրա, ասում է թէ իզուր են կարծում որ Թիւրքիան կամենում է ոչնչացնել շնորհված սահմանադրութիւնը։ Թիւրքիան յաղթող էր հանդիսացել Միդհադի կարծիքով բացի քաղաքական ասպարիզից և պատերազմական ասպարիզի վրա, բայց նրա առաջնորդներից արած սխալները կրկին կորցնել տուին նրան այն ամենը, որ նա վաստակած էր։ Կարելի է անել այնպիսի սխալներ, որոնք երբէք ուղղելի չեն լինի, աւելացնում է Միդհադ-փաշան և որոնք կը գցեն մի երկիր կորստեան անդունդի մէջ, բայց Միդհադ-փաշան յոյս ունի որ Օսմանեան պետութեան հպատակները, թէ մահմեդականները և թէ քրիստոնեաները ձեռք ձեռքի տուած առաջ կերթան և միմեանց օգնութեամբ առաջ կը տանեն հայրենիքի լուսաւորութեան և կրթութեան գործը։—Մենք թողնում ենք Միդհադ-փաշային նրա յոյսերը....

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Голосъ» լրագրի թղթակիցը գրում է Կ. Պոլսից։ «Կառավարութեան բռնած դիրքը հայերի վերաբերմամբ, պարզ ցոյց է տալիս, որ բարձր Դուռը չատ անհանգիստ է Հայաստանի մասին։ Կիսապաշտօնական մամուլը ներկայումս չէ դադարում հայերին գովելուց և չէ գանում բաւականին խօսք Էրզրումի հայերի վարմունքը գովաբանելու։ Բարձր դնելով նրանց հաւատարմութիւնը դէպի Սուլթանը և կայսերութիւնը, խոստանում է նրանց ապագայում ամեն տեսակ բարօրութիւններով բաղդաւորացնելու։ Էրզրումի կուսակալը հեռագրում է իր կողմից մեծ վիզիրին, որ նրան այցելեց տեղիս առաջնորդը և հանդիսաւոր կերպով հաւատացրեց իր և իրան յանձնված ժողովրդի հաւատարմութիւնը դէպի Թիւրքիան։ Սրա պատասխան, մեծ-վէզիրը իր կողմից ուղարկեց սրտալից շնորհաւորութիւն Ներսէս պատրիարքին և նրան տեղեկացրեց, որ կուղարկէ Օսմանիէ պատուանշանները Էրզրումի, Վանի, Մուշի և Ղարսի եպիսկոպոսներին։ Ղարսի վերաբերմամբ, ինչպէս տեսնում էք քիչ ուշացաւ։ Բացի դրանից «Վաքիտ» լրագիրը Պոլսեցի հայերի եռանդը գրգռելու համար, յայտնում է, որ 150 իրանց հաւատակիցներ կոտորվել են Ազիզիէ բէգուտի վրա եղած յարձակման ժամանակը և որ Թոփտաղում հայոց եկեղեցին կործանվել է ռմբակոծութեամբ։ Բայց այս ամեն կեղծ սիրելութիւնները ոչ մի հետևանքի չեն հասցնում, որովհետև Թուրքերի խղճմտանքում մնում է հարիւրից աւելի կործանված կամ սրբապղծված եկեղեցիներ և 60,000 չափ սպանված հայեր։ Այսպէսով հայերին ոչ մի կեղծուպատիր խօսքերով կարելի չի լինի որսալ, և նրանք ուրախանում են ռուսաց զէնքի յաղթութեան վրա։ Կան այնպիսի հայեր, որոնք սպասում են հայոց թագաւորութեան վերականգման մի ռուս մեծ իշխանի իշխանութեան տակ, բայց ամենից առաջ ցանկանում են ազատվել Թուրք իշխանութենից և քուրդերի ճնշումից և նոյնպէս վայելել հաւասարի ազատութիւնը։ «Մեծ քամբաղութիւն և յանցանք կը լինէր մարդասիրութեան դէմ ասել ինձ մի հայ, անդամ ազգային մեծ ժողովին, թէ Եւրոպան, պատերազմից վերջը, նորից դնէր մեզ Թուրքերի լծի տակ։»

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են որ Գերմանիայի կայսր Վիլհէլմը Փոքր-Ասիայի մէջ յաղթութիւններ անելու համար, գեներալ Լորիս-Մելիքովին շնորհեց պրուսական Pour le mérite պատուանշանը։

—Հռոմից գրում են որ Միդհադ-փաշան դիտաւորութիւն ունի թողնել Իտալիա և գնալ կրկին Անգլիա, որպէս զի խնդիրքով դիմէ Անգլիային և նրա թագուհուն Թիւրքիային փրկելու։

—Թիւրքաց Կ. Պոլսի լրագիրները աշխատում են նուազեցնել Ղարսի առման նշանակութիւնը և հանգստացնում են ժողովուրդը, հաւատացնելով որ Էրզրում քաղաքը նոյնքան պինդ բերդ է, որքան և Ղարս, և լրագիրներից մինը «Վաքիթ» մինչև անգամ ասում է՝ «ինչքան և ծանր լինէր մեզ համար այդ կորուստը, մենք չը պիտի վհատենք։ Մենք ունենք նոյնքան զօրեղ բերդ, Էրզրում որ կարող է արգելք դնել քաղաքակրթութեան և մարդասիրութեան թշնամու (?) առաջ գնալուն։ Մենք սպասում ենք Աստծուց վրէժխնդրութիւն։»

—Բագուղայից հեռագրում են նոյեմբերի 30-ից որ փորձ է արած Զէրնօգորիայի իշխան Նիկոզայոսին սպանելու։ Փորձը չաջողվեցաւ։ Իշխանի պահապաններից մի քանիսներ վիրաւորված են։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վիէննայի «Neue freie presse» լրագիրը ստացաւ Ֆրանկֆուրթ-Մայնի վրա քաղաքում գտնվող բնագիտական ընկերութենից հետևեալ նրկատողութիւնը։ «Բոլոր լրագիրների հաւաքած տեղեկութիւններին նայելով, այլ ևս կարելի չէ տարակուսել տէլէֆոնի (հեռախօսի) նշանակութեան և օգտաւէտութեան վրա, բայց այդ նշանաւոր գիւտի հնարողի մասին մի քանի սուտ և սխալ լուրեր են տարածվում։ Հիմայ, երևի ամենին յայտնի է, որ այդ գիւտը ամերիկական չէ, այլ գերմանական։ Այդ մասին այլ ևս վիճելու տեղիք չը կայ, որովհետև Ֆրանկֆուրթի բնագիտական ընկերութեան տարեգրի մէջ, 1860—61 թւի գրքում տպված է այն գործիքի նկարագրութիւնը պատկերներով, նոյն իսկ հնա-

բողի ձեռքով գրված։ Ֆրանկֆուրթցի պրոֆէսոր Բէտզեր, անդամ ընկերութեան, այն ժամանակում չատ հետաքրքրվում էր այդ գործիքով և այդ գիւտի, ինչպէս ասում է, կնքահայրն էր. այդ գործիքը պատրաստվեցաւ Ալբերտի մեքենայական գործատան մէջ։ Պուլիէ-Միւլլերի ֆիզիկական տասնագրքի, նոյնպէս և «գիրք գիւտերի» և այլն մէջ, գտնում են այս գործիքի նկարագրութիւնները։ Հնարողի անունն է—Ֆիլիպ Բէյս, երբեմն վարժապետ Ֆրիդրիխսդորֆում, Հոմբուրգի մօտ. նա մեռաւ մի քանի տարի սրանից առաջ։ Նրա ծնուած տեղը է—Հէլնհաուզէն Կուրհէսենում։ Նորերումս դոկտոր Թէոդոր Կլէմենս Ֆրանկֆուրթցի, պահանջում էր այդ գիւտի մէջ առաջնութեան իրաւունք, ասելով, որ այդ գիւտի վերաբերմամբ արդէն 1853 թվին արել է փորձեր, բայց որովհետև դա միայն 1863 թվին հրատարակեց տեղեկութիւններ իր գործիքի մասին, ուրեմն դա պէտք է, ինչպէս գիտութեան մէջ ընդունված է, առաջնութեան իրաւունքը թողնէ Ֆիլիպ Բէյսին։—Արդէն Տելէֆոնը միացնում է Ֆրանսիան Անգլիայի հետ։ Այդ մասին չատ աջող փորձեր եղան վերջերումս։ Ֆրանսիայում մէկը մօտենում է Տելէֆոնին և ծաղրելի բաներ է ասում, իսկոյն լսում է, որ Անգլիայում ծիծաղում են. մի քանիսները երգում են Անգլիայում, Ֆրանսիայում վայելում են այդ երգեցողութեան քաղցրութիւնը։ Շուտով կարելի կը լինի Տելէֆոնով սիրահարվել և գուցէ պսակվել, մանաւանդ որ անպատճառ պահանջ չը կայ պսակվելիս, մարդ ու կին մէկ տեղում լինեն։

***

Նորերումս հրատարակվեցան Լոնդոնում երկու նոր անգլիական գրքեր Կովկասի և Հայաստանի վերաբերութեամբ։ Այդ գրքերից մինը ունի հետևեալ վերնագիրը՝ «Transcaucasia and Mount Ararat» (Անդրկովկաս և Արարատ սարը) հեղինակութիւն Ջէմս Բրայսի։ Հեղինակը իր գրքի մէջ մեծ նշանակութիւն է տալիս հայերին, որպէս ամբողջ Անդրկովկասի ամենաընդունակ և աչխատասէր ազգութեան։ Նրա կարծիքը հայերի վերաբերութեամբ մանաւանդ այժմ ունի մեծ նշանակութիւն, աչքի առջև ունենալով արդեան քաղաքական անցքերը։ Ահա կարճ կերպով Բրայսի կարծիքը հայերի մասին։ «Հայերը, ամենաեռանդոտ, ամենաառաջադէմ ազգն են երկրի մէջ։ Վաճառականութեան մեծ մասը նրանց ձեռքումն է. հայերը ոչ թէ միայն խանութներում վաճառականութիւն են անում, բայց առաջնորդում են ծանր առևտրական ձեռնարկութիւնները։ Շատերը գտնվում են պետական ծառայութեան մէջ և իսկապէս ռուսաց պաշտօնեաների կէսը հայեր են։ Շատերը նրանցից չատ լուսաւորված և ընդունակ մարդիկ են։ Հայի լուսաւորութիւնը ընդարձակվում է համեմատ նրա նիւթական միջոցների ընդարձակման և այդ տեսակ մարդիկների թիւը ակներև կերպով չարունակ բազմանում է հայերի մէջ։ Մի խօսքով անկարելի է չը մարգարէանալ բաղդաւոր ապագայ հայերին։» Միւս գիրքը հայերի վրա անուանվում է «Զիով Փոքր-Ասիայի միջով» հեղինակութիւն Բէրնաբի։ Հեղինակը չատ վատ է խօսում չէրկէսների և Թիւրքերի մասին և գովում է հայերին։

***

ԹԻՖԼԻՍԻ Մասնաժողովը յօգուտ Թիւրքիայից դէպի Անդրկովկաս գաղթականների յայտնում է որ յօգուտ կարօտեալ գաղթականների ընդունվումեն ամեն տեսակ հին և նոր չորեր։ Պահեստը գտնվում է Արծրունու քարվանսարայի մէջ։ Նուիրատուները թող բարեհաճեն բերել կամ ուղարկել իրանց այդ նուէրները նախկին Իվանովի այժմ Յովհաննիսեանի ընթերցարանը, Դվորցովի փողոց, Արծրունու տուն, որտեղ և կը ստանան տպված ստացականներ իրանց ընծայաբերութեան համար։ 8—20 (1)

ԹԻՖԼԻՍԻ Մասնաժողովը յօգուտ գաղթականների յայտնում է որ, դրամական նուիրատուութիւնները յօգուտ գաղթականների ընդունվում են «Մշակ» և «Тифл. Вѣстн.» լրագիրների խմբագրութիւնների մէջ և «Փորձ» հանդիսի խմբագրատան մէջ։ Նոյնպէս ընդունվում են դրամական նուիրատուութիւնները և պ. Զիթախովի կանտորայում, Շաղինովի քարվանսարայում, (Բազազիանի ետև)։ 8—20 (1)

ԲԱՐՈՒՏՉԵՎԻ ԿԱՆՏՈՐԱ

ԹԻՖԼԻՍՈՒՄ Աստամանկի փողոցում, Կվիատկովսկու տուն, Մուղէումի հանդէպ։

1 ԱՌՆՈՒՄ Է և ԾԱԽՈՒՄ Է 5% բանկային տանող (վեքսելնի) տոմսակները։

2. ԾԱԽՈՒՄ Է 5% տանող տոմսակները պայմանաժամի յետաձգութեամբ 12 մինչև 24 ամսով և աւելի, 20 բուբլի բէհով։

3. ԸՆԴՈՒՆՈՒՄ Է դրամական դնումներ՝ տարեկան և կէս տարեկան պայմանաժամերով և մինչև պահանջ (պրոցէնտները կանտորայի հետ համաձայնութեամբ)։

4. ՓՈԽ Է ՏԱԼԻՍ գումարներ տոկոսաբեր թղթերի գրաւականով 6 և 10% բօրսային կուրսից պակաս. տանող տոմսակների վրա փոխ է տրվում գումարը մինչև 180 բուբլ և վերցվում է 12% տարեկան ծախսերով։ Վճարքը թոյլ է տրվում մաս մաս։

5. ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ուրիշ բանկերից տոմսակների կրկին գրաւդնելը, վճարում է մնացած փողերը և առնում է տոմսակներ ուրիշ բանկերի մէջ գրաւ դրած պարտաւորութիւններով։

6. ԱՊԱՀՈՎԱՑՆՈՒՄ Է տանող տոմսակներ հանդէսման տիրաժից։

7. Տոկոսաբեր թղթերի գրաւականով ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ, սեփական գարանտիայով, կրկնապատկելով սեփականատերերի եկամուտը։

8. ԸՆԴՈՒՆՈՒՄ Է պահելու համար բոլոր տոկոսաբեր թղթերը մինչև պահանջ։

Բոլոր տեղեկութիւնները այն ամենի վրա, որ վերաբերվում է բանկային օպերացիաների, թղթերի գնի, տարած գումարների և տիրաժների մասին, կարելի է անվարձ ստանալ կանտորայում։

21—21 (1)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

«Обзоръ» ամենօրեայ գրականական և քաղաքական լրագրի

1878 թուականի յունվարի 1-ից Թիֆլիսում կը հրատարակվի ամենօրեայ «Обзоръ» լրագիրը լրագրական մեծ թերթի ձևով։

Ստորագրվելու գինն է տարեկան ուղարկելով կամ հասցնելով 14 բուբլի. կէս տարվանը—8 ր., 3 ամսվանը—4 ր. 25 կոպէկ, և մէկ ամսվան գինն է 1 ր. 50 կոպէկ։

Ամբողջ տարվայ համար յետաձգութեամբ ստորագրվել ցանկացողները վճարում են հինգ-հինգ բուբլի յունվարի, ապրիլի և օգոստոսի սկիզբներին։ Քաղաքի ստորագրվողներից ստորագրութիւնը ընդունվում է «Կովկասեան գրավաճառանոցում» Միքայէլեան կամուրջի մօտ Ա. Զուբալովի տանը։ Օտարաքաղաքացիք դիմում են իրանց պահանջով «Обзоръ» լրագրի խմբագրութեանը, Թիֆլիսում հետևեալ հասցէով. Въ редакцію газеты «Обзоръ» въ Тифлисъ.

2—3

Խմբագիր Ն. Նիկոլադզէ
Կառավարիչ Պ. Իզմայլով

Դուրս եկաւ մամուլի տակից՝

«ՆԱԼԱՑ ԵՒ ԴԱՄԱՍԱՆՏԻ»

Հեքիաթ. Թարգմանեց հայ երեխանց համար Գէորգ Աքիմեանց, հրատարակեց գրավաճառ Զ. Գրիգորեանցը։ Գինն է 20 կոպէկ։

Թարգմանողը և հրատարակողը վաճառելուց գոյացած բոլոր գումարը նուիրում են յօգուտ 3000 գաղթած հայ ընտանիքներին։

Դրսի քաղաքներից ցանկացողները կարող են դիմել գրավաճառ Զ. Գրիգորեանցին 25 կոպ. ուղարկելով։

3—3

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5. — ՏԵՂԵԿԱՑՈՒՑ — ԹԻՖԼԻՍ. 1877.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Դեկտեմբերի 5-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլումպերիալը)	8	10
Հին 82 պր. մ. արժ. 1000 մ.	1400	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1180	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	225	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	218	—
Սարսելի կուրսը 259—50	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	—	—
	9	72
Վենայի կուրսը ածէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	35
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	265	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	9	20
» միւս տեսակը.	8	70
» չաքարաւազը .	8	60
» տրանզիտը. .	8	80
» մաքսը վճարած	13	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	9	40
Միւս տեսակը հին սերմից.	8	50
Բուրդը թուչի . . .	7	50
» թարաքամի .	3	50
Աւիւր Շորագալու . .	2	—
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	35
Մոմը բնաճարպի (стеар.)	15	20
Մետաքս Նուխվայ . .	157	—
Կախեթունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	47	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	54	—
Կոֆէն մօկօի. . . .	28	—
» լիվանի . . .	—	—
» մարտինկօյինը	26	

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդականների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30—50 բուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 բուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 բուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 բոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 բոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովօ.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փոթի . . .	9. 40	

	առաւօտ.
Փոթիից . .	9. 13
Ռիօն . . .	12. 13
Միխայլովօ. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիս. . .	1 37	
Գօրի. . . .	4 8	
Թիֆլիս. . .	7 56	

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գորի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ .	5. 22	3. 92	2, 18
Քութայիս	9.	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

1) Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ՝ Ռուսաստան և արտասահման ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 12 (բացի կիրակի օրերից)

2) Բագուի ճանապարհը՝ թեթև փոստը ընդունվում է երեքշաբթի և ուրբաթ օրերը, իսկ ծանր փոստը երկուշաբթի։

3) Երևանի տրակտը՝ ամեն օր։

4) Փոթի-Թիֆլիսեան երկաթուղու գիծը՝ ամեն օր, բացի կիրակի օրերից։

5) Նուխու տրակտը՝ թեթև փոստը ընդունվում է չորեքշաբթի, իսկ ծանր փոստը շաբաթ օրերը։

6) Բէլիկլիւչի ճանապարհը՝ ամեն տեսակ փոստ ընդունվում է երկուշաբթի և ուրբաթ օրերը։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բացուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բէլիկլիւչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակը ածէ. .	4
Ռուսաստան նամակը	8
Գերմանիա, Աւստրիա	8
Ֆրանսիա.	8
Անգլիա	8
Շվէյցարիա. . . .	8
Թուրքիա (Կ. Պոլիս .	8
Թիւրքիա (ցամաք) . .	8
Իտալիա . . .	8
Ամէրիկա	28
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . .	70
Եգիպտոս . . .	27

ՓՕՍՏԻ ԿԱՌՈՒՑՔ

Թիֆլիսից Վլադիկավկաս փոստի կարգերը գընում են ամեն օր, երկու անգամ օրը։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ԱԳՈՒԼԻՍ. Ց. Մ. Ց. Ստացանք ձեր նամակը և կաչխատենք չուտով պատասխանել ձեզ մասնաւոր նամակով։ Ձեր նամակը մեծ համակրութեամբ կարդացինք։

—ԱԳՈՒԼԻՍ. Կ. Մ. Ա. Շատ ուրախ ենք որ կամենում էք աչխատակցել մեր լրագրին։ Բայց գուցէ այդ առաջին նամակը նամակի ձևով չենք տպի, այլ լուրերի ձևով։

—ՇՈՒՇԻ. Տ. Ն. Դեռ չենք կարող ոչինչ ասել ձեր նամակի մասին։

—ՇՈՒՇԻ. Գ. Տ. Ց. Դուք կամենում էք «Մշակ» ստանալու համար փողի տեղ վճարել յօդուածներով։ Շատ լաւ, բայց մենք չը գիտենք թէ դուք և թէ միւս մեզ անյայտ պարոններ որքան չնորհ ունեն գրելու։ Այդ մենք կարող ենք անել մեզ յայտնի գրողների հետ։ Գրեցէք, տեսնենք։

Дозволено Цензурою 4 Декабря 1877 г. Тифлисъ. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ